

ՀԲԸՄ եւ ՄԱԿի Զարգացման Ծրագրի Միացեալ Մարմինը Ի Նպաստ Գիւմրիի Պետական Արհեստագիտական Հիմնարկին Հանգանակութիւն Կը Կատարէ

ՀԲԸՄ-ՄԱԿի Յատուկ Նպատակի Մարմինը (ՅՆՄ) (AGBU-UN Special Interest Group), համագործակցելով ՄԱԿի Զարգացման Ծրագրի (ԶԾ) (UN Development Programme) հետ, Հինգշաբթի, Յունիս 11, 2009ին, ԶԾի Հայաստանի Արհեստագիտական Կրթական եւ Վարժողական Ծրագրին ի նպաստ իր երկրորդ հիւրասիրութիւնը կազմակերպեց «Մեկերեան Բըկ Կալերի» հաստատութեան սրահին մէջ, Նիւ Եորք, ի ներկայութեան ութսուն հիւրերու՝ ներառեալ ՀԲԸՄի եւ ՄԱԿի բարձրաստիճան ներկայացուցիչներուն:

ՄԱԿի ԶԾը, Տանիմարքայի պետութեան նիւթական օժանդակութեամբ, «Արհեստագիտական Կրթական եւ Վարժողական Համակարգի (ԿՎՀ) Արդիացումի» ծրագիրը կիրարկեց, որ Հայաստանի մէջ արհեստագիտական – տեխնիկական կրթութիւնը զարգացնելու եւ անոր մակարդակը բարձրացնելու նպատակին կը ծառայէ: ՀԲԸՄիութիւնն ալ, որ միշտ յանձնառու է կրթական ծրագիրներու զարգացման, ընկերակցութեամբ ՄԱԿի ԶԾին, հանգանակութիւն կատարեց ի նպաստ Գիւմրիի Պետական Արհեստագիտական Հիմնարկի մօտ արձանագրուած, սակայն նիւթական անբարենպաստ վիճակ ունեցող ուսանողներուն համար: Արհեստագիտական այս հիմնարկը կը մասնագիտանայ երկաթուղիի արհեստագիտական անձնակազմ պատրաստելու մէջ, եւ Հայաստանի մէջ միակ կրթական հաստատութիւնն է որ այս ասպարէզին յատուկ մասնագէտներ կը պատրաստէ: Այժմ, 36,000էն աւելի ուսանողներ արձանագրուած են Հայաստանի արհեստագիտական դպրոցներուն մէջ: Այս ուսանողներուն կը զլացուին հարկ եղած վարժութիւնները ձեռք ձգելու միջոցները, քանի ներկայիս անոնք զրկուած են իրենց յաճախած դպրոցներուն մատուցած անհրաժեշտ յարմարութիւններէն ու դիւրութիւններէն, ինչպէս նաեւ ջամբուած նիւթերուն որակէն:

ՄԱԿի մօտ ՀԲԸՄի գլխաւոր ներկայացուցիչը՝ Ելենա Համբարձումեան յայտնեց թէ՛ «ՀԲԸՄ-ՄԱԿ ՅՆՄը հպարտութեամբ կ'աջակցի ԶԾի ԿՎՀի

ծրագրին: Մեր կարծիքով, շատ գնահատելի ծրագիր մըն է, որուն կիզակետը Հայաստանի մարզերուն մէջ կրթութիւն ջամբող հաստատութեանց նիւթական օգնութիւն հայթայթելն է»: Այս ընդունելութեան շնորհիւ, մօտաւորապէս չորս հազար տոլար հանգանակուեցաւ. այս գումարով կը գոյանան Գիւմրիի Պետական Արհեստագիտական Հիմնարկը յաճախող քսան առաջադէմ ուսանողներուն կրթաթոշակները:

Ընդունելութեան ընթացքին, խօսք առին ՄԱԿԻ մօտ ՀՀ դեսպան Ն.Վ. Արմէն Մարտիրոսեան, Աւագ Ծրագրի Ղեկավար եւ Խումբի Առաջնորդ, ՄԱԿի ԶԾ Արեւմտեան Անկախ Պետութիւններու Խմբաւորումի եւ Կովկասի, Լուսիա Վինթոն, ինչպէս նաեւ «Եւրագլիա Կրուփ»ի հիմնադիր ու նախագահ Իան Պրեմմեր, որ իր շահեկան ելոյթի մէջ անդրադարձաւ մասնաւորապէս միջազգային կացութեան ներկայ իրավիճակին, Հայաստանէն մինչեւ Իրան, Հիւսիսային Քորիայէն մինչեւ Չինաստան: Վերջինիս խօսքերը եւ պարզած տեսակետները գերեցին ու հաճութեամբ ընդունուեցան ներկաներէն:

Որպէս գեղարուեստական բաժին, DJ Աշ Գրիգորեանի միջոցառութեամբ սկաւառակներու վրայ ձայնագրուած երգեր ունկնդրուեցան: Իւրաքանչիւր հիւր ստացաւ նաեւ, իբր նուէր, մակագրուած օրինակ մը Պր. Պրեմմերին գիրքէն՝ «The Fat Tail: The Power of Political Knowledge for Strategic Investing»:

«Մեկերեան Բըկզ» հաստատութիւնը, որ սիրայօժարօրէն տրամադրած էր սրահը այս ձեռնարկ նուիրահաւաքման համար, Արցախի բանուած ձեռագործ գորգ մըն ալ նուիրեց, որ լուռ աճուրդի դրուեցաւ: